

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

15.02.2006թ.

ժ. 17.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Լ. Խաչատրյան (*Իրավաբանական բաժին*), Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Դ. Մարտիրոսովա (*Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. 2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

/Ձեկուցող` Լ. Միրզոյան/

2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի, ըստ ծրագրերի, 2005 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին:

/Ձեկուցող` Ա. Հայրապետյան/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ 01.01.1998թ.-01.01.1999թ., 01.04.2004թ.-31.03.2005թ. և 01.01.2005թ.-31.12.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները (ըստ հետազոտվող բնակավայրերի անվանումների և ծածկագրերի) «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիային տրամադրելու թույլտվության մասին.

/Ձեկուցող` Դ. Մարտիրոսովա/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. 2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

/Ձեկուցող` Լ. Միրզոյան/

Որոշեցին՝

Հաստատել 2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի, ըստ ծրագրերի, 2005 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Ազգայն վիճակագրական ծառայության աշխատակազմի 2005 թվականի հաշվեկշիռը՝ ըստ ծրագրերի (համապատասխան ձևերով և հավելվածներով կցվում են)։

1. Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (01.07.01) առ 01.01.06 թ.

(հազ.դրամ)

ԱԿՏԻՎ			ՊԱՍԻՎ		
1	Հիմնական միջոցներ	616595.7	1	Ֆինանսավորում	31533.1
2	Նյութեր և պաշարներ	27504.2		այդ թվում՝	27442.8
3	Սակավարժեք և արագամաշ առարկաներ	78243.5		բյուջեից	
4	Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-		այլ միջոցներ	
5	Դրամական միջոցներ	0.3	2	Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	694839.2
6	Հաշվարկներ	5871.3	3	Հաշվարկներ	1842.4
7	Ծախսեր	-	4	Արտադրանքի իրացում և եկամուտներ	0.3
8	Վնասներ	-	5	Կապիտալ շինարարության ֆինանսավորում	-
9	Կապիտալ շինարարության ծախսեր	-			
ՀԱՇՎԵԿՇԻՌ		728215.0	ՀԱՇՎԵԿՇԻՌ		728215.0

2. Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում (01.07.03) առ 01.01.06թ.

(հազ.դրամ)

ԱԿՏԻՎ			ՊԱՍԻՎ		
1	Հիմնական միջոցներ	48338.0	1	Ֆինանսավորում	5962.0
2	Նյութեր և պաշարներ	4892.0		այդ թվում՝	5962.0
3.	Սակավարժեք և արագամաշ առարկաներ	9663.6		բյուջեից	
4	Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-		այլ միջոցներ	
5	Դրամական միջոցներ	-	2	Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	58001.6
6	Հաշվարկներ	2304.6	3	Հաշվարկներ	1234.6
7	Ծախսեր	-	4	Արտադրանքի իրացում և եկամուտներ	-
8	Վնասներ	-	5	Կապիտալ շինարարության	-

				Ֆինանսավորում	
9	Կապիտալ շինարարության ծախսեր	-			
ՀԱՇՎԵԿՇԻՌ		65198.2	ՀԱՇՎԵԿՇԻՌ		65198.2

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

3. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից` 01.01.1998թ.-01.01.1999թ., 01.04.2004թ.-31.03.2005թ. և 01.01.2005թ.-31.12.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները (ըստ հետազոտվող բնակավայրերի անվանումների և ծածկագրերի) «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիային տրամադրելու թույլտվության մասին.

/Զեկուցող` Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին`

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին` «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիային տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.01.1998թ.-01.01.1999թ., 01.04.2004թ.-31.03.2005թ. և 01.01.2005թ.-31.12.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները (ըստ հետազոտվող բնակավայրերի անվանումների և ծածկագրերի) հետևյալ` տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրատարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան